ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ կատարված մահափորձի առիթով այսօր հեռագիր հղեց ԼՂ Հանրապետության նախագահին: Հեռագրում մասնավորապես ասվում է.

«Անհանգստությամբ ու վրդովմունքով տեղեկացանք երեկ գիշեր Ձեր դեմ կատարված մահափորձի մասին: Այս պահին փառք ենք առաքում առ Բարձրյալն Աստված, որ Ձեր կյանքին վտանգ չի սպառնում, և աղոթում ենք առավել ծանր վիրավորված Ձեր վարորդի ու թիկնապահի լիակատար ապաքինման համար:

Մեծարգո Նախագահ. հուսով ենք, որ մահափորձի հանցավորները կբացահայտվեն և իրենց արժանի պատիժը կգտնեն, որպեսզի ազգային-հասարակական մեր կյանքից արմատախիլ արվեն նման դատապարտելի արարքները, որոնք վտանգում են մեր Հայրենիքի կայունությունը, խաթարում երկրի ներքին խաղաղությունը և անհուսությամբ համակում մարդկանց հոգիները:

Թող Բարին Աստված Իր օրհնության ներքո պահպանի թանկ գնված հայրենի պետականությունը մեր, և թող երկնառաք Հույսի, Հավատի ու Սիրո բարի պտուղները արգասավորվեն հայրենի մեր հողում ու մեր ժողովրդի զավակաց հոգիներում:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
22 մարտի 2000 թ.